ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

23 ապրիլի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/3
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 56 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետի մամուլի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ԶԼՄ-ի ներկայացուցիչներ:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը տեղեկացրեց.

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2019 թվականի ապրիլի 17-ի N1255-Ա որոշումը՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը համարվել է անհետաձգելի և ընդգրկվել է Երևանի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի նիստի օրակարգի նախագծում:

Երևանի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված «Երևան քաղաքում Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.26/1 հասցեում գտնվող Հանրապետության նախագահի նստավայրը «Հանրապետության տուն» անվանակոչելու մասին» հարցը հանում է օրակարգից:

Համաձայն Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանի կողմից ներկայացված գրության՝ «Իրինա Ռոդնինայի գեղասահքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանափոխելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» հարցը հանվում է օրակարգի նախագծից:

Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանն առաջարկեց օրակարգի նախագծի 16-րդ հարցը՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագիծը, տեղափոխել որպես օրակարգի նախագծի 2-րդ հարց.

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 7, դեմ՝ 33 , ձեռնպահ՝ 12

Առաջարկը չընդունվեց

Երևանի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Լևոն Հովհաննիսյանն առաջարկեց օրակարգի նախագծի 13-րդ հարցը՝ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» ավագանու որոշման նախագիծը հանել օրակարգի նախագծից:

ՈՐՈՇՎԵՑ – Օրակարգի նախագծի 13-րդ կետը՝ «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» ավագանու որոշման նախագիծը հանել օրակարգի նախագծից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 7 , ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

Արտահերթ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ և ԼՈՒՅՍ խմբակցությունների ղեկավարներ՝ Միքայել Մանրիկյանը, Դավիթ Խաժակյանը, ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանը:

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը ներկայացրեց Երևանի ավագանու 2019 թվականի ապրիլի 23-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
4. Հրաչյա Թամրազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
5. Կարապետ Մելիք-Օհանջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
6. Պերճ Զեյթունցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
7. Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
8. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
9. Երևան համայնքի սեփականության 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
10. Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:
11. «Նորիկ-70» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:
12. «ՈՍԿԵ ԱԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:
13. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին:

1. **ԼՍԵՑԻՆ -** Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 7 , ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

2. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ ընտրելու մասին» N 2-Ա որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝56, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

3. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի N6-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Լուսինե Գևորգյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրել Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լուսինե Գևորգյանին:

Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ ընտրելու մասին» N 6-Ա որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝55, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

4. **ԼՍԵՑԻՆ** - Հրաչյա Թամրազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Հրաչյա Թամրազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – Տալ համաձայնություն բանասիրական գիտությունների դոկտոր, բանաստեղծ և թարգմանիչ Հրաչյա Թամրազյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Տերյան փողոց հ. 59 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝46, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

5. **ԼՍԵՑԻՆ** - Կարապետ Մելիք-Օհանջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Կարապետ Մելիք-Օհանջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ս. Մկրտչյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Տալ համաձայնություն ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց հ. 5 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝51, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

6. **ԼՍԵՑԻՆ** - Պերճ Զեյթունցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Պերճ Զեյթունցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – Տալ համաձայնություն ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ, արձակագիր, դրամատուրգ Պերճ Զեյթունցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կասյան փողոց հ. 3 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝56, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

7. **ԼՍԵՑԻՆ** - Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Սաթենիկ Մկրտչյանը տեղեկացրեց, որ «Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – Տալ համաձայնություն ՀՍՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ Համբարձում Սայադյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ. 31 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝55, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

8. **ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՅՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զավեն Առաքելյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Գրիգորի Երիցյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Արմեն Ղալեչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Նուարդ Վարդանյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
5. Արման Անտոնյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը, քաղաքապետի տեղակալ Ս.Հարությունյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
2. Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Լիլիթ Կիրակոսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N46-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետև՝ Հավելված) 4-րդ և 5-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4. Երևանի քաղաքապետին կից ձևավորվում և գործում են հետևյալ Խորհուրդները.

1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման,
2) քաղաքաշինական,
3) շրջակա միջավայրի պահպանության,
4) առևտրի և ծառայությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման,
5) առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի,
6) սոցիալական հարցերի
7) կրթության, մշակույթի, զբոսաշրջության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների,

5. Խորհուրդները ձևավորվում են առավելագույնը 20 անդամի կազմով, իսկ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման և քաղաքաշինական խորհուրդները՝ առավելագույնը 25 անդամի կազմով:»:

2. Հավելվածի 6-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«6. Խորհրդի անդամներին իր որոշմամբ, 2 տարի ժամկետով, նշանակում է Երևանի քաղաքապետը՝ աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև հասարակական հիմունքներով համայնքի բնակիչների և կազմակերպությունների ներգրավմամբ, որոնց մասնագիտական գործունեությունը առավել սերտ առնչվում է տվյալ խորհրդի գործունեությանը, ընդ որում՝ խորհրդի կազմում 3 անդամ կարող են նշանակվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և Երևանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներից, իսկ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման Խորհրդի կազմում ներգրավվում են նաև.»:

3. Հավելվածը լրացնել նոր 7.1-րդ կետով.

«7.1. Հրապարակային հայտարարությունը տեղադրվում է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում խորհրդի անդամների նշանակումից առնվազն 10 աշխատանքային օր առաջ:»:

4. Հավելվածի 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«8. Խորհուրդը ձևավորված է համարվում, եթե նշանակվել են տվյալ Խորհրդի անդամների առավելագույն քանակի առնվազն կեսը:»:

5. Հավելվածը լրացնել նոր 8.1-րդ կետով.

«8.1. Խորհրդի ձևավորումից հետո դրա կազմում թափուր մնացած կամ խորհրդի անդամի լիազորությունները դադարելու հետևանքով առաջացած թափուր տեղերի համալրումը իրականացվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրված հայտարարության հիման վրա, սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով:»:

6. Հավելվածի 10-րդ կետի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Խորհրդի նախագահը, Խորհրդի նախագահի տեղակալը և քարտուղարը հանդիսանում են Խորհրդի անդամ, ընդ որում՝ Խորհրդի նախագահի տեղակալ կարող է լինել Երևանի քաղաքապետի տեղակալը կամ Երևանի գլխավոր ճարտարապետը կամ Երևանի քաղաքապետի խորհրդականը կամ օգնականը կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչության պետը, իսկ քարտուղար՝ խորհրդի յուրաքանչյուր անդամ (համաձայնությամբ):»:

7. Հավելվածի 12-րդ կետում «մասնակցել նաև» բառերից հետո լրացնել «այլ խորհրդների անդամներ կամ համապատասխան մասնագետներ,» բառերով:

8. Հավելվածը լրացնել նոր 13.1-րդ և 13.2-րդ կետերով.

«13.1. Խորհրդի որոշմամբ խորհրդի կազմում առանձին հարցերի քննարկման նպատակով կարող են ձևավորվել հանձնաժողովներ, որոնց անդամների քանակը և աշխատակարգը սահմանում է խորհուրդը:

13.2. Խորհրդի կազմում ձևավորված հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել տվյալ խորհրդի և այլ խորհուրդների անդամներ և հրավիրված մասնագետներ, որոնք Խորհրդին ներկայացնելու նպատակով քվեարկությամբ ընդունում են խորհրդակցական բնույթի եզրակացություն:»:

9. Հավելվածը լրացնել նոր 23.1-րդ կետով.

«23.1. Խորհրդի անդամը պարտավոր է Խորհրդի նախագահին հայտարարել շահերի բախման մասին և չմասնակցել այն հարցի քննարկմանը և դրա վերաբերյալ քվեարկությանը, որն առնչվում է իր, իր ընտանիքի անդամի և մերձավոր ազգականի մասնավոր շահերին կամ որի

վերաբերյալ ինքը, իր ընտանիքի անդամը կամ մերձավոր ազգականը շահագրգիռ անձինք են, այդ թվում՝ քննարկվող նախագծի կամ ծրագրի շրջանակներում վճարի դիմաց կամ հասարակական հիմունքներով ներգրավված են որպես մասնագետ կամ խորհրդատու: Շահերի բախման վերաբերյալ չհայտարարելու և քվեարկությանը մասնակցելու դեպքում, շահերի բախման իրավիճակում գտնվող խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած, իսկ եթե նշված անձի քվեարկությունը ունեցել է վճռորոշ նշանակություն, քվեարկության արդունքները համարվում են չեղյալ:»:

10. Հավելվածի 25-րդ կետում «երկու» բառը փոխարինել «հինգ» բառով:

11. Հավելվածի 31-րդ կետի 4-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

12. Հավելվածի 31-րդ կետի 7-րդ ենթակետում «ավագանու անդամ» բառերից հետո լրացնել «կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կամ Երևանի ենթակայության կազմակերպության աշխատակից» բառերը»:

13. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Երևանի քաղաքապետին կից ձևավորված Խորհուրդների գործունեությունը դադարեցվում է և ձևավորվում են նոր Խորհուրդներ սույն որոշման պահանջներին համապատասխան:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 56 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝54, դեմ՝2, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

9. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականության 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Դավիթ Խաչատրյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Լևոն Զաքարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Սաթենիկ Մկրտչյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը և քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Լևոն Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականության 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Գրիգորի Երիցյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Դավիթ Խաչատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց 14.00-ին:

Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը հիմք ընդունելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N1-Ն որոշման 114-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հայտարարեց երեսուն րոպե ընդմիջում:

Նիստը վերսկսվեց ժամը 14.30-ին:

5. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևան համայնքի սեփականության 2018 թվականի գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 49, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

10. **ԼՍԵՑԻՆ** - Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարց ուղղեց.

1. Սուրեն Էյրամջյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով գույք ամրացնելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Էռնեստ Ավանեսով- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – Երևան համայնքի սեփականություն հանդիսացող թվով 12 գույքերն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 53, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

11. **ԼՍԵՑԻՆ** - «Նորիկ-70» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««Նորիկ-70» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

3. Միքայել Մանրիկյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

4.Արսեն Կարապետյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Ելույթների վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Մարությանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «Նորիկ-70» ՍՊԸ-ին՝ 2019թ. ընթացքում սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝50, դեմ՝0, ձեռնպահ՝4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

12. **ԼՍԵՑԻՆ** - «ՈՍԿԵ ԱԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՅԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««ՈՍԿԵ ԱԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Հայկ Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել «ՈՍԿԵ ԱԳԱ» ՍՊԸ-ին սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 54 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝50, դեմ՝0, ձեռնպահ՝4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ

13. **ԼՍԵՑԻՆ** - «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Հռիփսիմե Առաքելյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

2. Անի Խաչատրյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

3.Արուսյակ Հարությունյան-Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

4. Լյուդմիլա Սարգսյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

5. Թեհմինա Վարդանյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ

6. Մարկոս Հարությունյան- Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ

7. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Մարությանը, քաղաքապետի առաջին տեղակալ Հ.Սարգսյանը, քաղաքապետի տեղակալ Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը տեղեկացրեց, որ ««Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ ստեղծելու և դրա կանոնադրությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

2. Միքայել Մանրիկյան-Երևանի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Գայանե Մելքոմ Մելքոմյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Սերգեյ Սարգսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Իզաբելլա Աբգարյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Դավիթ Խաժակյան- Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

4. Անահիտ Ասատրյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

5. Հայկ Հովհաննիսյան- Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի վարչական տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները Երևան համայնքի բյուջեի միջոցների հաշվին իրականացնելու նպատակով ստեղծել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ (այսուհետ՝ հիմնարկ):

2. Հաստատել հիմնարկի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Երևանի քաղաքապետին՝

1) ապահովել հիմնարկի կանոնադրության հաշվառումն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Երևան քաղաքի ավագանու հաստատմանը ներկայացնել հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը։

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝48, դեմ՝0, ձեռնպահ՝0

Որոշումն ընդունվել է միաձայն

Երևանի քաղաքապետ Հ.Մարությանի առաջարկությամբ որոշվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2019 թվականի մայիսի 22-ին, ժամը 11.00-ին։

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 16.40-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին տրվեցին պատասխաններ (աղագրությունը կցվում է)։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Դուկասյան